Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը հայտարարում է մագիստրոսի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 2025-2026 ուսումնական տարվա ընդունելություն

Մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է երկու փուլով:

1-ին փուլով ընդունելության փաստաթղթերն ընդունվում են ս.թ. հունիսի 05-ից մինչև հունիսի 25-ը (ներառյալ), ժամը՝ 09:00-17:30: Հարցազրույցն անցկացվելու է հունիսի 30-ին:

2-րդ փուլով ընդունելության փաստաթղթերն ընդունվում են ս.թ. օգոստոսի 04-ից մինչև օգոստոսի 25-ը (ներառյալ), ժամը 09:00-17:30: Հարցազրույցն անցկացվելու է օգոստոսի 27-ին:

Պահանջվող փաստաթղթերը

Մագիստրատուրայի ընդունելության համար դիմորդները պետք է ներկայացնեն ներքոհիշյալ փաստաթղթերը (պատճենահանված).

- բարձրագույն կրթության դիպլոմը և դիպլոմի միջուկը (միջուկի 1-ին էջը և գնահատականների միայն հայերեն հատվածը),
- ինքնակենսագրություն,
- 3 լուսանկար (3×4 չափի),
- զինվորական գրքույկի (առկայության դեպքում) բնօրինակը (անհրաժեշտ է պատճենահանել 1-4-րդ և 18-19-րդ էջերը),
- անձնագիրը (1-4-րդ էջերը) կամ նույնականացման քարտը (երկկողմանի),
- ստացած մրցանակների, վկայականների, դիպլոմների պատճենները՝ առկայության դեպքում,
- Ընդունելության ծառայությունների համար գանձվող 5000 ՀՀ դրամի վճարման անդորրագիրը (ԱյԴի Բանկ, Հ/Հ 11817065324000):

Ընդունելության դիմում-հայտը լրացվում է տեղում՝ Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնում:

2025 թ. ՀՖԿՍՊԻ շրջանավարտները (դեռևս դիպլոմ չստացած) պետք է ներկայացնեն ակադեմիական տեղեկագիր, իսկ ՀՀ այլ բուհերի 2025 թ. շրջանավարտները (դեռևս դիպլոմ չստացած)՝ տվյալ բուհի ռեկտորի ստորագրությամբ տեղեկանք՝ բակալավրիատի շրջանավարտ լինելու մասին և ակադեմիական տեղեկագիր (կնքված և ստորագրված):

Արտասահմանյան բուհի դիպլոմ ներկայացնելու դեպքում դիմորդը դիպլոմի հետ պետք է ներկայացնի նաև Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից տեղեկանք՝ դիպլոմի համարժեքության մասին:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՖԿՍՊԻ Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնի ղեկավար Գայանե Թամրազյանին, հեռախոս՝ +374 10 55 33 10 (164), Էլ.հասցե՝ gayane.tamrazyan@sportedu.am